

Հոկեե	.	.	.	.	Խորհրդային Հայաստանի մշակույթը (քաղաած)	.	42.	284
Փէլիկեան	Հ.	Երիս	.	.	Հանդէս հանդիսից. «Սնահիտ».	.	.	169
»	»	.	.	.	»	»	«Սիւն»	218

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հանդէս-Յօբելեան-Ներկայացում

Այեմշահ ի. Մ.	•	•	•	Մուրադ-Ռափ. Ն. Ա. Միութեան 25ամեայ Յոբելեանը Սևրի Մուրատեան վարժարանին մէջ.	106
Լիշիհեան Տ.	•	•	•	Երուսաղէմի Միթիթարեան վարժարանի ամալերջի մանդէսը	279
Վանատուր	•	•	•	Աստուածաշունչի 1500ամեակը Մուրատեան վարժարանին. մէջ (տես Ս. Գիրք)	177
»	•	•	•	Սևրի Մուրատեան վարժարանի ամալերջի հանդէսը	276
Խմբ.	•	•	•	Միթիթար Աբբահօր յիշատակին (հանդէս ի Ս. Ղազար).	175
»	•	•	•	Միթիթարայ, Մուրատի և Ռափայէլի յիշատակին (ի Մ. Ռ. վարժարան)	175
»	•	•	•	Մ. Ռափ. վրժրնի. ամալերջի հանդէսը	220
»	•	•	•	» » » տարեկան մարզահանդէսը	224
»	•	•	•	Թատերական ներկայացումներ Մուրատեան վարժարանին մէջ - Սևր.	110
»	•	•	•	Թատերական ներկայացումներ Մուրատ - Ռափայէլեան վարժարանին մէջ - Վենետիկ	111

Պաշտօնական այցելութիւններ

Խմբ.	.	.	.	.	Լեոն Գարախանի այցելութիւնն ի Ս. Ղազար (14 Յուլիս)	224
»	.	.	.	.	Վէնետոյ ֆրանսական հիւպատոսի՝ George Gueyraudի ի պատիւ յարգանքի ցոյց Մ. Ռափ. Վրժինի մէջ . . .	224
»	.	.	.	.	Ֆրանսական փոխ-ծովակալ Մուժէի այցելութիւնն ի Ս. Ղազար	224
»	.	.	.	.	Paul Boyer-ի այցելութիւնն ի Մ. Ռափ. Վարժարան և ի Ս. Ղազար	176
Ահեղահ խ. Մ.	.	.	.	.	Մոշրատեան վարժարանը կ'այցեկեն	
»	»	.	.	.	Պիժա՝ Բարիգի քաղաքապետական ժողովի քարտուղար (Յունուար. 19)	108
»	»	.	.	.	Ծեր. Վերտէ և Նախարար Լ. Մարէն (Փետր. 11)	108
»	»	.	.	.	Գարեգին Ս. Յովսէփեան՝ Կաթ. Պատուիրակ	109



၁၂၃၄၅၆၇

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ - ԹԻԻ 1-2

ՀԱՏ. ՂԴ ՌՅԶԵ-ՌՅԶԶ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ՄՈՒՐԱՏ - ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԱԴԱՐՁԸ (1836-1936)

ԴԱՐ մը կ'անցի այն օրէն՝ երբ երկու նախախնամական ուժեր, Սամուէլ Մուրատի եւ Եղուարդ Ռափայելի դըրամական նուիրական կտակները որպէս մարմին, եւ Մխիթարեան Միաբանութեան սիրայօժար յանձնառութիւնն եւ նուիրումը իբր Ազգային կրթական գործին շունչ եւ հոգի՝ կազմեցին Հայութեան համար կենսունակ զոյգ Հաստատութիւններ, Մուրատեան եւ Ռափայելեան Վարժարանները, որոնց կատարած դերը Հայ ազգի վերածնունդեան եւ լուսաւորութեան համար՝ շատ աւելի մեծ քան իրենց վայելած գեղեցիկ համբաւը՝ զուգընթաց է եւ ժողովրդականացում՝ այն նուիրական առաքելութեան՝ որուն համար կերտած է իր Ուխտը մեծն Մխիթար:

Հայրենաբաղձիկ ծայր մը, Մարտիրոս Մկրտչեան Դաւթեանց, երբ դար մ'առաջ հեռաւոր Հնդկաստանէն բոլոր հոգւով կը գոչէր եւ Հայ մանկութեան սրտին մէջ կ'ուզէր տոգորել Ս. Ղազարու վանքին պաշտամունքը՝ թէ «Աստ լեզու Հայկական մշակեալ ծաղկեցաւ, եւ իբր զվիւնիկ ի մոխրոյ վերակենցաղեաց: Աստ գոյ գրատուն հոխ, վարժատուն եւ տպագրատուն: Աստ հարիւրաւոր մատենաք ի լոյս ածան... Աստ գրաւոր վաստակք Նախնեաց մերոց երանելեաց՝ յամենածալս ժանեաց ժամանակին զերծան: Աստ ծաղկեցուցանեն զարուեստս եւ զգիտութիւնս յօգուտ Հայ ազգին», կը շեշտէր Նաեւ Հայ ազգի սերունդին կրթութեան նուիրական գործը Ս. Ղազարու Միաբանութեան կողմէն այնքան փարուժով ձեռնարկուած. «Աստ բնակի իմաստուհին Աթենաս, եւ զՀայեցի մանկտին ի Պալլադիովն իւր հեմեցուցանէ: Աստ ի վեր երեւեցաւ մեզ երկրորդ Աթէնք յառաջնոյն Աթենայ ոչինչ ընդհատ իմաստութեամբ՝»:

Աստուածաշունչի Հայերէն Թարգմանութեան Ժե դարադարձին առեւել տարի մ'ամբ
բողջ Հայ Գրի պաշտօնը նուիրագործեցինք, խոստովանելով թէ Գիրն եւ Դպրութիւնն
է որ իմը կը կազմեն ազգային գոյութեան եւ անոր քաղաքակրթութեան:

Այդպէս ըմբռնած էր Աթէնք, այդպէս մեծցաւ եւ Հռոմ՝ իւրացնելով ինչպէս գիրը՝ այսպէս նաեւ անոր իմաստութիւնը։ Համոզուած ենք թէ այդ եղաւ ծրագիրը նաեւ մեր **Ոսկեդարու մեծ եւ սուրբ հեղինակներուն։** Այն ինչ Հայ տառերն ստեղծեց Մեսրոպ իր հանձարին թափով, ձայն տուաւ մեծ Հայրապետին Սահակի եւ Լյոսի արքային՝ Վռամշապուհի, եւ իսկոյն պետական հրովարտակով բացաւ վարժարաններ Հայաստանի ամէն անկիւնը եւ հոն տեղացուց Հայ մանկութիւնն եւ երիտասարդութիւնը։ Եւ այդպէս տիրացաւ Հայ ազգի ճակատագրին։ Նա տեսաւ Հելլէն իմաստութեան կրթարանները, հոն վարժել տուաւ գունդագունդ հայ երիտասարդութիւնը։ Եւ գիտենք թէ ո՞րքան լոյս, եւ ո՞րքան գիտութիւն բերին մեզի Եգիպտոսը, Կորինները, Յովսէփներ ու Խորենացիներ՝ Բիւզանդիոնէն, Աթէնքէն, Եդեսիայէն ու Աղեքսանդրիայէն։

Մեսրոպի թափը ազգասիրութեան եւ տոհմիկ դաստիարակութեան՝ շարժեց նաեւ ամբողջ Բիւզանդիոսի արքունիքը։ Զօրավար, Հայրապետ ու Կայսր տեղի տուին։ Եւ Հայ Գրի մշակոյթը յաղթանակեց նաեւ Յունահայ բաժնին մէջ։ Երանի՜ թէ մեր գաղութները, այսօր, հանդերձ իրենց տրուած միջոցներով, կամիլ մը սնուցանեն իրենց սրտին մէջ այն մեծ սէրէն՝ որով կը վառէր Մեսրոպի հոգին Հայ ազգին համար։

Մեսրոպի ոգևով տոգորուած, ու Աթէնքի եւ Հռոմի մեծութիւնն որո՞հացող ու հալացնող Միսիմարեան Միաբանութիւնն ալ նոյնպիսի ըմբռնումով էր տարուած։

Կը բաւէ թերթել մեր Ժամանակագրութիւնը, ուր Մուրատեան վարժարանի հիմնադրութեան համար (1834) Ս. Ղազարու մէջ ստեղծուած խանդավառութիւնը անօրինակ է։ Եւ օրեայ կրօնական պաշտամունք վանքի տաճարին մէջ նոյն ինքն նոր վարժարանին նորընտիր վարչութեան կողմէ։ Եւ ապա հանդիսաւոր ճեմարանական բանախօսութիւն մը ի լուր համօրէն Միաբանութեան՝ Հ. Մանուէլ Զախչախեանի դասական լեզուով եւ շունչով։ Նա մեծ կրթարանի բացման նաւակատիքն ընելով՝ կը բացատրէր գերագոյն նպատակը, կազմն եւ ուղղութիւնը, հոսակ ստանալիք ցանկալի օգուտը Հայ ազգին համար։

Գրեթէ նոյն ոճով կը կատարուի բացումը նաեւ Ռափայէլեան վարժարանի՝ երկու տարի վերջ (1836) ի ներկայութեան մեր վերածնունդեան տիտան դէմքերուն՝ Սումալի, Ազգերեաններու, Բագրատունիի, Հիւրմիւզներու, Միսասեանի, Թրեանցի եւն։

Սակայն թերեւս ըլլայ մէկը որ խորհի թէ Վենետիկոյ Միսիմարեանք իրենց հիմնադրութենէն յետոյ ինչո՞ւ այդքան ուշ յղացան եւ լծուեցան ազգային կրթական գործին։ — Իրականութիւնն այն է որ Եւրոպայի մէջ մեծ կրթարան մը հիմնելու ծրագիրը Միսիմար Աբբասիօր կենդանութեան օրով իսկ յղացուած եւ մշակուած է, բայց չգործադրուած՝ պարզապէս նիւթական միջոցներու պակասին համար։

Այլապէս, Միսիմարեանց բուն ժողովրդական կրթական գործը տեսնելու համար պէտք է դիմենք ամբողջ դար մը ետեւ։ Եւ յիշուի 1746-ին՝ Միսիմարայ օրով է որ կը բացուի նախկին վարժարանն ի Պաշապով (Թրանսիլուանիոյ մէջ), ուր առաջին տարին արդէն կը յաճախէին 30 հայ մանուկներ։ Երեք տարի վերջ, Միսիմարեան նոյն Առաքելաբարան մը, 1749ին, 40 աշակերտներով։ 1797ին ի Սիբիլի՞ 55-60 աշակերտներով։ Գեռ 1752ին կ'արժարծուի Կ. Պոլսի մէջ բանալիք վարժարանի մը հարցը, որ դժբախտաբար կը յետաձգուի՝ միշտ նիւթական նպաստի չգոյութեան պատճառաւ, բայց վերջապէս կ'իրագործուի 1800ին սկիզբները։ Ատիկա Բերայի վարժարանն է, ապա կը հիմնուի Քաղկեդոնիք բարձրագոյն ծրագրով, ապա Տրապիզոնի մէջ, ապա ի Խրիմ եւն, ի Պարտիզակ, Նիկիմիդիա, Սալմաստ, Մուշ եւն։

Եւ պէտք է ըսենք որ շնորհիւ այդ ժողովրդական մեր դպրոցներուն էր որ ծնաւ Մուրատեանն ալ եւ Ռափայէլեանը։ Բաւ է խորհիլ որ Սամուէլ Մուրատ մեծ բարեւարը (ծն. 1760ին) 1773-1775ին աշակերտեցաւ մեր Հայրերուն՝ վերել յիշուած Վարա-

տինի դպրոցին մէջ՝ շուրջ երկու տարի, յետոյ չորս ամիս ալ ապրելով ի Վենետիկ՝ ըմբռնեց ապա եւ գնահատեց Միսիմարեանց տուած կրթութիւնն եւ ոգին, եւ ըստ այնմ՝ իր մեծ կտակն ըսաւ յօգուտ Հայ ազգի չքաւոր մանուկներուն։

Ռափայէլի կտակն ալ Միսիմարեան ոգւոյն եւ կրթութեան արդիւնքն եղաւ։ Այս բարերարը վարձատրելու համար իր որդւոց դաստիարակը՝ Հ. Նիկողայոս Բուզայեանը՝ կը կտակէ փոքր գումար մը, որպէս զի Ռոլէնի Հռովմէական Պատմութիւնն եւ Հնախօսութիւնը տպուի եւ մնացորդով բացուի փոքր դպրոց մը աղքատ հայ մանուկներու համար։

Թէ ո՞րքան մեծ զոհողութեամբ Միսիմարեանք յաջողեցան տպել վերոյիշեալ հսկայ հատորները եւ թէ ո՞րքան մեծցուցին Ռափայէլի փոքր համարած դպրոցը, յօգուտ Հայ ազգին աղքատ մանուկներուն՝ քիչ շատ ծանօթ է։

Տխուր դէպքեր, պետական ճնշումներ երբեք չկասեցուցին Ռափայի կրթական մեծ առաքելութեան մէջ. միշտ նոր հորիզոններ բացաւ Երկինք նուիրական գործին՝ որուն համար կը զոհուինք անվերապան։ Եւ ժողովրդականներն ինչպէս բարձրագոյն դպրոցները՝ կը շարունակեն տալ միշտ ցանկալի արդիւնք։

Եթէ առաջին յիմնամեակին (1834-1882) երկու բարձրագոյն Հաստատութիւնները հասուն, պատրաստուած մեծ անձեր տուին ի բաւականութիւն ազգային բոլոր պէտքերուն եւ պետական շրջանակներուն։ Դարուն հետագայ պահանջին համեմատ Ռափայի գիտցաւ համալսարանական դասիկներ ալ շնորհիւ յատուկ մրցական թոշակներով 1882 թուականէն սկսեալ, արտաքոյ կտակին՝ շնորհիւ իր զոհողութիւններուն։


Միեւնի կարելի՞ է անձուկ էջերու մէջ ամփոփել թուարկութիւնն անգամ մեծ եւ պանծալի անուններու՝ զորս Ազգին տուին դարաւոր կրկին Վարժարանները։ Պէշիք-Թաշլեանէն մինչեւ Թերզեան — Աճէմեան — Վարուժան. Սագըզէն — Փորթուգալէն — Պըյըզլէն մինչեւ Մեղուն Խան, Սինապեան, եւ դեռ քանի՜ քանի գրագէտ, դաստիարակ, ազգային գործիչ, քաղաքագէտ, բժիշկ, ճարտարագէտ, երաժիշտ, նկարիչ եւն։


Թէ ի՞նչ եղաւ եւ ո՞րքան անոնց դերը ազգային վերածնունդեան՝ կրթական եւ գրական տեսակէտներով. ինչպիսի՞ հոսանքներ ստեղծեց «Համագգեացն» ու միութեան դրօշակիրը Պէշիքթաշլեան՝ իր «Եղբայր եմք մեք» սրտայոյզ սիրերգով, մեր ընծերցողները պիտի տեղեկանան «Բազմավէպ»ի միացեալ յոբելինական թուով։

Քաղակալիւթ Եւրոպայի լուսաւոր սրտին մէջ բոյն դրած եւ Միսիմարայ զաւակներու դարաւոր զոհաբերութեամբ Հայ ցեղի վերածնունդեան եւ փառքի որդանը կազմող բարձրագոյն մեր զոյգ կրթարանները երբ իրենց առաջին հարիւրամեակի արձագանգը կը հնչեցնեն ի լուր մայր Հայրենիքի եւ Սփիւռքի Հայութեան, կ'ըղձան սիրով որ գիտակից ուրախութեամբ մասնակցի Հայութիւնը իրենց դարաւոր անասան գոյութեան եւ յաղթանակներուն յօգուտ մեր քաղաքակրթութեան՝ իր բոլոր մասնահիւղերուն մէջ, ու օրհնէ յիշատակը անմահ Բարեբարներուն, յորդորելով եւ մաղթելով որ դեռ շատ նմաններ ծնին իր ծոցէն՝ բարիք ընելու Ազգին եւ յաւերժապէս արժանի ըլլալու երախտագիտութեան։

ԽՄԲ.

1. Վ.Կատրիայ Այբբենարան. տպ. ի Կալկաթա, 1841 - ՌՄՂ, էջ 106.





ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ՆԵՐՇՈՒՆ ԵՐԱԺՇՏԱԳԻՏ ԵՒ ԽԱՆԴԱՎԱԾ ՏԱՐԱՅԻՉ ԻՐ ՑԵՂԻ ԲՆԻԿ ԱՐՈՒՆԱՍԻՆ

«Le Courrier Musical»

Եկեղեցական երաժշտութիւնը ընդհանրամարտով առաջ կը բերէ ժողովուրդին մէջ մաքուր ջերմոտանութիւն և սերտ համախմբութիւն եկեղեցիին շուրջը:

Ազգային երաժշտութիւնը եկեղեցիէն դուրս կը տարածէ հայրենի շունչ և միամիտ ու պարզուկ զգացումներ՝ դաստիարակուող սերունդին մէջ:

ԿՈՄ. ՎԱՐԴԱՊԵՏ



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ծան. Խմբ. — Սոյն յօդուածը յաւելեալ և ճշտեցեալ՝ բանախօսութիւնն է զոր կատարեց երաժշտագետ յօդուածագիր մեծ. Հայրը Մուրատ-Ռափայէլեան Վարժարանին մէջ, ի ներկայութեան Վենետիկ Հայ զաղու-թին, ողբացեալ Կոմիտաս Վ. անմոռաց յիշատակին նուիրուած հանդէսին մէջ, տարւոյս Յունուար ամսու 26ին:

ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒԳՐ

1935 Հոկտեմբեր 21...

Ահա թուականը՝ որ վշտի ու կսկծանքի դառնագոյնը քանդակեց բոլոր հայ սրտե-րու մէջ:

Երեք ամիսներ անցան այն օրէն, ու կը շարունակուէի դեռ ողբը ամենուրեք՝ ծով ցաւերով և յուշալից դրուագներով այն մեծ Արուեստագէտին շուրջ՝ որ Հայ Մշա-կոյթի պատմութեան ընծայեց փառա-ւոր էջեր:

Ո՛չ, կարօտակէզ սիրտ մը չէ՛ այս անգամ, այլ ինքն իսկ Մայր Հայրենիքն է, որ տիրազին կը ձայնէ բնութեան ծոցին մէջ՝ ի խնդիր սփոփանքի:

«Հով արէք, սարեր ջան, հով արէք, իմ դարդին դարման արէք: — Սարերը հով չեն անում, իմ դարդին դարման անում:

Հով արէք, ամպեր ջան, հով արէք. իմ դարդին դարման արէք: — Ամպերը հով չեն անում, իմ դարդին դարման անում:

Սարեր, ձորեր, դաշտեր ու ջրեր, Մարմանդ — մարմանդ վագող աղբիւրներ, Մի վեր կացէք, իմացէք, Տեսէք իմ սըրտի ցաւեր...¹:

Կոմիտաս Վարդապետի անդարմանելի կորուստին առջեւ՝ անագին պարապութիւն մը կը զգայ այսօր ամբողջ Հայ Ազգը:

Ճիշդ է որ — ինչպէս յաճախ եւս ըսուեցաւ —, արդէն դադրած էր կեանքէ այդ թանկագին էակը սկսեալ այն օրէն՝ երբ ծայր տուաւ անոր մէջ անողոք հիւ-ւանդութիւնը. այս էր պատճառը որ վեր-ջինս ալ երկրորդ մահ նկատուի:

Բայց այս հաշիւն ալ դեռ իրողութեան չի համապատասխաներ, եթէ պէտք է հոս թուարանական ճշդութիւն փնտռել:

Ահա թէ ինչ կը գրէ Գարեգին Լեւո-նեան.

«1921 թին էր. Թիֆլիսն արդէն Խոր-հրդային քաղաք, մի օր փողոցում ինձ պատահում է Եղիշէ Թադէոսեանը և ցաւելով յայտնում, որ Կոմիտասը վախճան-ւել է. Ո՛րտեղից զիտես, Եղիշէ,—հարցնում



Հ. Վահան Յովհաննէսեան մահացած Հայ երաժշտագէտի սնարին

եմ նրան. «Պուսի թերթերում գրած է եղել այդ մասին. կարդացողներն ինձ ասացին»: Ես էլ, որքան յիշում եմ, իմ կողմից մի լուր տպագրել տւի «Կարմիր աստղում»: Պէտք էր մի բան անել: Կոն-սերվատորիայի դահլիճում կազմակերպե-ցինք մի սգահանդէս, ճոխ, հետաքրքրա-կան: Ընկերներն ինձ էին յանձնել բացման խօսքը և բանախօսելու պատիւը Կոմիտասի կեանքի և գործի մասին»:

«Թիֆլիսի թերթերը գրեցին մեր երե-

1. Հազար ու մի խաղ, Խմբ. Կոմ. Վ. և Մ. Արեգեա-նի. Ա. Յիսնեակ. Վարդապետ 1904. Բ. տպ. էջ 5: